

**Հայտարարվում է մրցույթ՝ Տավուշի մարզի Կիրանցի
Գ.Վարդանյանի անվան հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը ռուսաց լեզվի
ուսուցչի թափուր պաշտոնի համար**

Հայտարարվում է մրցույթ՝ Տավուշի մարզի Կիրանցի Գ.Վարդանյանի անվան հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչի թափուր պաշտոնի համար: Ուսուցչի համար վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման(նախնական 16 դասաժամի համար): Ուսուցչի հետ կնքվելու է անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցնելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և բանավոր (մանկավարժական , մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
 2. Միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ(դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
 3. Անձնագրի պատճենը,
 4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
 6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
 9. Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:
- Փաստաթղթերի ընդունումը 2013 թ. ապրիլի 9-ից մինչև մայիսի 10 -ը ներառյալ, ամեն օր ժամը 10-00 – 15-00 բացի կիրակի օրերից:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
- Մրցույթը տեղի կունենա 14.05.2013թ. ժամը 14-00- ին Կիրանցի Գ.Վարդանյանի անվան հիմնական դպրոցում:
- Հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Կիրանց 1փ. 2.22:
- Տեղեկությունների համար գանգահարել +374 94 97 94 94 հեռախոսահամարով:
- Դպրոցի տնօրեն Վ.Բարիկյան